

Պետական ֆինանսական կառավարման առանձնահատկությունները ՀՀ-ում

Բաղդասարյան Գ. Բ.

ՀՊՏՀ, Կառավարման ֆակուլտետ, առկա բակալավրիատ (Երևան, Հայաստան)
gevorg.baghdasaryan20@gmail.com

Բանալի բառեր. պետական ֆինանսներ, պետական ֆինանսական կառավարում, պետական բյուջե, հարկեր

Особенности государственного финансового управления в РА

Багдасарян Г. Б.

Армянский государственный экономический университет (Ереван, Армения)
gevorg.baghdasaryan20@gmail.com

Аннотация: Данная статья посвящена изучению особенностей управления государственными финансами в Республике Армения за первые 7 месяцев 2019–2020 годов, что дает возможность понять влияние экономического и социального кризиса на государственный финансовый сектор. В статье упоминаются основные показатели государственного бюджета: расходы государственного бюджета, доходы, дефицит и профицит. В статье сравниваются месяцы январь-июль 2019 и 2020 гг. с целью анализа бюджета, понимания основных направлений расходов, изучения налоговых поступлений как основного источника доходов, выявления причин бюджетного дефицита прямого воздействия эпидемии на эти показатели. В результате всего этого были внесены определенные предложения, которые помогут избежать дальнейшего углубления дефицита государственного бюджета в краткосрочной и долгосрочной перспективе.

Ключевые слова: Государственные финансы, государственное финансовое управление, государственный бюджет, налоги

Specifics of Public Financial Management in the RA

Baghdasaryan G. B.

Armenian State University of Economics (Yerevan, Armenia)
gevorg.baghdasaryan20@gmail.com

Abstract: This article is devoted to the study of the peculiarities of public finance management in the Republic of Armenia for the first 7 months of 2019 and 2020, which makes it possible to understand the impact of the economic and social crisis on the public financial sector. The article mentions the main indicators of the state budget: state budget expenditures, revenues, deficit and surplus. This article compares the months January-July 2019 and 2020 in order to analyze the budget, understand the main directions of expenditures, study tax revenues as the main source of income, identify the causes of the budget deficit of the direct impact of the epidemic on these indicators. As a result of all this, certain proposals have been made that will help to avoid further deepening of the state budget deficit in the short and long term.

Keywords: Public finance, public financial management, state budget, taxes

Պետությունը քաղաքական կազմակերպություն է, և, ինչպես ցանկացած կազմակերպության, այնպես էլ պետության առջև դրված նպատակներից է սեփական գոյության պահպանումը, որի համար անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ [1, էջ 17]: Հատկապես արդի սոցիալ-տնտեսական մարտահրավերների պարագայում ավելի է ընդգծվում պետության դերը պետական ֆինանսական կառավարման և ֆինանսական համակարգի կայունության ապահովման գործում: Պետությունը, ի դեմս պետական կառավարման մարմինների, կատարում է այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են տնտեսական, սոցիալական, անվտանգության ապահովման, բնապահպանության և այլն [2, էջ 13]: Այդ գոր-

ծառույթների իրականացման պատշաճ կազմակերպումն էլ ենթադրում է ֆինանսական միջոցների առկայություն, որոնք պետության գոյության հիմքն են, և դրանք ընդունված է անվանել պետական ֆինանսներ:

Պետական ֆինանսները համարվում է ցանկացած պետության ֆինանսական համակարգի կարևոր բաղադրիչը, որը սերտորեն կապված է բանկային և ապահովագրական համակարգերին: Հետևաբար, չունենալով պատկերացում պետական ֆինանսների և նրանց կատարած գործառույթների մասին՝ դժվար է հետևություններ անել տվյալ երկրում գործող ֆինանսավարկային համակարգի մասին:

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել ՀՀ-ում ֆինանսական համակարգի տարրերից գլխավորը՝ պետական բյուջեն, նրա ցուցանիշները՝ դիտարկվող ժամանակաշրջան ընդունելով համավարակից առաջ և հետո ընկած ժամանակահատվածները, փորձել հասկանալ միտումները և կատարել անհրաժեշտ հետևություններ:

Նախ հասկանանք պետական ֆինանսների և նրանց գործառնությունների էությունը, որը հնարավորություն կտա դատողություններ անել ֆինանսական համակարգի վերաբերյալ:

Պետական ֆինանսները իրենից ներկայացնում է ֆինանսական հարաբերությունների ամբողջություն, որը ապահովում է ներքին և արտաքին պետական քաղաքականության նպատակների նվաճում [3, էջ 7]: Այդ հարաբերությունները պայմանավորված են տարբեր մակարդակներում ֆինանսական ռեսուրսների ձևավորմամբ, որոնք հետագայում օգտագործվում են սոցիալ-տնտեսական տարբեր խնդիրների լուծման նպատակով:

Պետական ֆինանսների դերն ու նշանակությունը որոշվում են ֆինանսական միջոցների ծավալով, որոնք անհրաժեշտ են Կառավարությանը իր նպատակների իրականացման համար: Պետական ֆինանսները Կառավարության գործունեության հիմքն են, և միայն դրամական միջոցների բավարար քանակի դեպքում է հնարավոր դառնում իրականացնել պետության սոցիալական քաղաքականությունը, նպաստել տնտեսության առանձին հատվածների աշխուժացմանը, կատարել գիտական հետազոտություններ, ապահովել ազգային անվտանգությունը և այլն: Պետական ֆինանսները մակրո-էկոնոմիկական կարգավորման հզոր լծակ է, քանի որ հենց այդ գործիքի միջոցով պետությունը կարող է լուծել բազմաթիվ խնդիրներ՝ կառավարել տնտեսական աճի տեմպերը, ապահովել գների կայունությունը, կարգավորել վարկային տոկոսը, զսպել շուկայական տատանումները [4, էջ 5]: Ինչպես ցանկացած երևույթի, այնպես էլ պետական ֆինանսների բովանդակությունը արտացոլվում է նրա գործառնություններում: Տարբերում ենք 3 գործառնություն [5].

1. Բաշխման գործառնություն

Մենք գիտենք, որ Կառավարությունն է պատասխանատու այնպիսի գործառնությունների կատարման համար, ինչպիսիք են ազգային անվտանգության ապահովումը, կրթության, առողջապահության ոլորտի կարգավորումը, պետական սահմանների հսկումը և այլն: Այս գործառնությունների իրականացման համար Կառավարությունը օգտագործում է պետական բյուջեի միջոցները՝ փորձելով դրանք արդյունավետորեն բաշխել տարբեր ոլորտների միջև՝ այդպիսով ունենալով ցանկալի արդյունք: Եվ ՀՆԱ-ի ու ԱԵ-ի բաշխման միջոցով էլ ապա-

հովում է տնտեսության տարբեր ճյուղերի բնականոն աշխատանքը:

2. Վերաբաշխման գործառնություն

Աշխարհի բոլոր երկրներում տարբեր մարդկանց եկամուտների և հարստության միջև կան էական տարբերություններ: Վերաբաշխման գործառնության էությունը կայանում է նրանում, որ հնարավորինս կրճատի այդ անհավասարությունը եկամուտների և հարստության վերաբաշխման միջոցով:

Պետական ֆինանսների ոլորտում այդ խնդրի լուծման համար կան 3 հիմնական տարբերակներ.

- Ներդնել հարկման պրոգրեսիվ համակարգ, որի պարագայում մարդկանց եկամուտների աճին զուգընթաց կաճեն նաև նրանց կողմից պետական բյուջե վճարվող հարկերի դրույքաչափերը
- Պրոգրեսիվ հարկերը օգտագործել հանրային ծառայությունների ֆինանսավորման համար, ինչպիսիք են մատչելի բնակարանի ձեռքբերումը, առողջապահությունը և սոցիալական տարբեր տեսակի աջակցությունները
- Հարկերի առավել բարձր դրույքաչափեր օգտագործել պերճանքի առարկաների նկատմամբ, օրինակ՝ թանկարժեք մեքենայի համար:

3. Կայունացման գործառնություն

Ցանկացած տնտեսություն ունենում է և՛ վերելքներ, և՛ վայրէջքներ: Այդպիսի իրավիճակները տնտեսությունում հանգեցնում են անկայունության: Կայունացման գործառնության էությունը կայանում է նրանում, որ վերացնի կամ գոնե նվազագույնի հասցնի այդպիսի տատանումները և չեզոքացնի դրանց ազդեցությունը տնտեսության վրա:

ՀՀ-ում պետական ֆինանսական կառավարումը իրականացնում է ՀՀ ֆինանսների նախարարությունը, որի հիմնական առաքելությունն է ֆինանսների արդյունավետ կառավարման, հարկաբյուջետային, ինչպես նաև դրամավարկային քաղաքականության կոորդինացման միջոցով նպաստել տնտեսության զարգացմանը [6]:

Ընդհանուր առմամբ, պետական ֆինանսական կառավարումը վերաբերում է պետական բյուջեի ձևավորմանը, ծախսային ուղղությունների որոշմանը և դրանց կառավարմանը: «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ **պետական բյուջեն** պետությանը Մահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակա-

հատվածի ֆինանսական ծրագիրն է: Ընդ որում, այդ միջոցները խմբավորվում են ըստ հետևյալ հիմնական տեսակների՝ հարկեր և տուրքեր, պաշտոնական դրամաշնորհներ և այլ եկամուտներ:

ՀՀ պետական բյուջեի մշակման գործընթացը սահմանվում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով: Բյուջետային գործընթացը պաշտոնապես սկսվում է ՀՀ վարչապետի կողմից տվյալ տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին որոշումը ստորագրելու օրվանից:

Հաշվի առնելով իրականացվելիք ծրագրերի համար անհրաժեշտ ռեսուրսների սահմանափակությունը՝ ՀՀ Կառավարությունը մշակում և ՀՀ Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում հաջորդող տարվա պետական բյուջեի նախագիծը բյուջետային տարին սկսվելուց առնվազն 90 օր առաջ: Պետական բյուջեն ընդունվում է մինչև բյուջետային տարին սկսվելը: Եթե այդ ժամկետում պետական բյուջեն չի ընդունվում, ապա մինչև պետական բյուջեի ընդունումը ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով [7]:

2019 թ. ՀՀ պետական բյուջեն ունեցել է հետևյալ տեսքը (մլրդ դրամ) [8].

1. Եկամուտների գծով՝ 1,496,4
2. Ծախսերի գծով՝ 1,648
3. Դեֆիցիտ՝ 151,6

2020թ. նախատեսվում է պետական բյուջեի եկամուտները հասցնել 1,695 մլրդ-ի՝ նախորդ

տարվա համեմատ ավելացնելով 198.6 մլրդ դրամով, իսկ ծախսային մասը՝ 207.7 մլրդ դրամով [9]:


Ինչպես արդեն նշվել է, պետական բյուջեի եկամուտները ձևավորվում են 3 աղբյուրներից՝ հարկային եկամուտներ և պետական տուրքեր, պաշտոնական դրամաշնորհներ և այլ եկամուտներ: 2019թ. պետական բյուջեի եկամուտների գրեթե 94 տոկոսը կազմել են հարկային եկամուտները և պետական տուրքերը, իսկ համապատասխանաբար 2.6 և 3.4 տոկոս կազմել են պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտները: 2020թ. ցուցանիշները շատ չեն տարբերվում. Հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են բյուջեի եկամուտների 95 տոկոսը, պաշտոնական դրամաշնորհները՝ 2, իսկ այլ եկամուտները՝ 3 տոկոս: Մակայն պետք է հաշվի առնել, որ 2020թ. Ցուցանիշները միայն նախօրոք պլանավորված ցուցանիշներ են և երկրում տիրող սոցիալ-տնտեսական, ինչպես նաև քաղաքական ճգնաժամով պայմանավորված՝ փաստացի ցուցանիշները կունենան զգալի շեղում: Փորձենք կատարել 2019 և 2020 թթ. պետական բյուջեի ծախսերի և եկամուտների առաջին 7 ամիսների վերլուծություն՝ փորձելով հասկանալ սոցիալական և քաղաքական ճգնաժամերի ազդեցությունը այդ ցուցանիշների վրա: Ըստ ՀՀ Վիճակագրական կոմիտեի տվյալների՝ ունենք հետևյալ ցուցանիշները.

	2019թ. հունվար-հուլիս	2020թ. հունվար-հուլիս
Պետական բյուջեի եկամուտներ, ընդամենը	884 480.0	833 348.7
Ծախսեր, ընդամենը	777 177.3	938 229.1
Պակասուրդ (-)/հավելուրդ (+)	107 302.7	-104 880.4
Ֆինանսավորում	-107 302.7	104 880.4
Ֆինանսավորման ներքին աղբյուրներ	-55 283.6	59 706.1
բանկային հատված	-76 775.2	54 603.3
ոչ բանկային հատված	21 491.6	5 102.8
Ֆինանսավորման արտաքին աղբյուրներ	-52 019.1	45 174.3

Աղյուսակ 1. 2019 և 2020թթ. հունվար-հուլիս ամիսների պետական բյուջեի ծախսերի և եկամուտների կառուցվածք (մլն դրամ) [10].

Աղյուսակ 1-ի տվյալներից պարզ է դառնում, որ 2020 թ. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տեղի են ունեցել զգալի փոփոխություններ, մասնավորապես պետական բյուջեի եկամուտները նվազել են մոտ 6 %-ով, ծախսերն ավելացել են 20 %-ով, և 2019 թ. համեմատ 2020 թ. նույն ժամանակահատվածում արդեն ունենք պետական բյուջեի դեֆիցիտ: 2020 թ. այսպիսի զգալի փոփոխությունները պայմանավորված են մարտին Հայաստան ներթափանցած կորոնավիրուսի համավարակով, երբ շատ տնտեսավարող սուբյեկտների մոտ արձանագրվեց եկամուտների նվազում, որը

հանգեցրեց պետական բյուջե մտնող հարկերի ծավալի նվազման, հետևաբար նվազեցին նաև բյուջեի եկամուտները, և դրան հակառակ ավելացան սոցիալական և տնտեսական ծախսերը՝ ուղղված համավարակի հետևանքների չեզոքացմանը: Այս համատեքստում կարևոր է տեսնել պետական բյուջեի եկամուտների կառուցվածքում հարկերի և տուրքերի տեսակարար կշիռը և դրա փոփոխությունը նախորդ ժամանակաշրջանի համեմատ: Ըստ ՀՀ Վիճակագրական կոմիտեի հրապարակումների՝ ունենք հետևյալ պատկերը.



Գծապատկեր 1. 2019 և 2020 թթ. հունվար-հուլիս ամիսների պետական բյուջեի եկամուտների կառուցվածքում հարկերի և տուրքերի տեսակարար կշիռը (մլն դրամ, %) [10].

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, 2019 թ. համեմատ 2020 թ. նվազել են գրանցել գրեթե բոլոր հարկատեսակները, որի ազդեցությամբ պետական բյուջե մուտքագրվող հարկերի և տուրքերի ընդհանուր գումարը նվազել է՝ 832 միլիարդից հասնելով 790 միլիարդի: Չգալի փոփոխություններ են կրել նաև ընդհանուր հարկերի և տուրքերի կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող հարկատեսակները՝ ավելացված արժեքի հարկը և եկամտային հարկը՝ համապատասխանաբար նվազելով 3.9 և 1.1 տոկոսային կետերով: Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքում հարկերի և տուրքերի տեսակարար կշիռն այսպիսի փոփոխությունները պայմանավորված են

պահանջարկի և դրան հետևանք նաև առաջարկի նվազմամբ, որը բերում է արտադրության ծավալների կրճատման և հատույթի նվազման, ինչպես նաև հետևանք է ֆիզիկական անձանց եկամուտների նվազման:

Այժմ ուսումնասիրենք պետական բյուջեի ծախսային հատվածը՝ հասկանալու համար, թե ինչպիսի համամասնություններով են կատարվել և կատարվում ծախսերը, որոնք են գերակա ուղղությունները:

Ներկայացնենք ծախսերի կառուցվածքն ըստ գործառնական դասակարգման, որը համընդհանուր պատկերացում է տալիս ծախսերի նպատակայնության և ոլորտների առաջնայնության ու կարևորության մասին:

	2019թ. հունվար-հուլիս	2020թ. հունվար-հուլիս
Ծախսեր, ընդամենը	777 177.3	938 229.1
ա յի թվում՝		
1 սոցիալական և աշխատանքային հարցերի լուծում	257 448.4	313 308.6
2 Ընդհանուր բնութագրի հաճախումներ և ծախսեր	158 292.3	174 115.6
3 Պաշտպանություն	109 303.5	149 502.1
4 Զբաղմունքային, մշակութային, սպորտային և զբոսայգիային ծախսեր	72 004.9	78 345.1
5 Կրթություն	71 510.1	87 909.9
6 Առողջապահություն	41 902.8	68 484.9
7 Տնտեսական և հարկաբերական ծախսեր	41 582.9	41 653.2
8 Զբաղմունքային, մշակութային և կրթական	16 124.9	19 916.5
9 Բնակարկային, ջրամատակարարության և կոմունալ ծախսեր	6 323.1	2 998.5
10 Զբոսայգիային, սպորտային և զբոսայգիային ծախսեր	2 684.5	1 994.7

Աղյուսակ 3. 2019 և 2020 թթ. հունվար-հուլիս ամիսների պետական բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման (մլն դրամ).

Աղյուսակ 3-ում ներկայացված է պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգումը, այսինքն՝ բաշխվածությունն ըստ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառնությունների: Ինչպես երևում է և՛ 2019, և՛ 2020թթ. պետական բյուջեի 60 %-ից ավելին հատկացվում է սոցիալական ոլորտին, ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների մատուցմանը և երկրի պաշտպանությանը: Ընդհանուր ծախսերի կառուցվածքը 2020 թ. բացարձակ արժեքով կրել է զգալի փոփոխություններ: Ընդհանուր ծախսերը ավելացել են մոտ 160 միլիարդով, որը տեղի է ունեցել հիմնականում սոցիալական պաշտպանության, ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների և պաշտպանությանն ուղղվող ծախսերի հաշվին: 2020 թ. հունվար-հուլիս ամիսներին մեծ չափով աճել են կրթության ոլորտին ուղղվող ծախսերը՝ գրեթե 23 %-ով: Մեծ աճ են գրանցել նաև սոցիալական պաշտպանությանը, ինչպես նաև առողջապահությանն ուղղվող ծախսերը, որոնք կապված են Կառավարության կողմից ընդունված աջակցության ծրագրերի հետ, որոնք ուղղված են համավարակի սոցիալական և տնտեսական հետևանքների չեզոքացմանը: Նվազել են միայն բնակարանային շինարարությանը և կոմունալ ծառայություններին ու շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղվող ծախսերը: Հաշվի առնելով ՀՀ-ում տիրող սոցիալ-տնտեսական ճգնաժամը, ինչպես նաև ԱՀ-ում տիրող պատերազմական իրավիճակը՝ սպասվում է, որ երկրի պաշտպանությանն ուղղվող ծախսերը կգրանցեն զգալի աճ:

Պետական բյուջեի ծախսերի և եկամուտների միջև կարող են որոշ անհամապատասխանություններ լինել, այսինքն՝ եկամուտները կարող են գերազանցել ծախսերը, որի արդյունքում առաջանում է բյուջեի հավելուրդ, հակառակ դեպքում՝ պակասուրդ կամ դեֆիցիտ: Առանձնացվում է նաև երրորդ տարբերակ՝ հաշվեկշռված բյուջե, որտեղ ծախսերն ու եկամուտներն իրար հավասար են: Մակայն պետք է նշել, որ պետական բյուջեի այսպիսի դրսևորումը շատ հազվադեպ է, նույնիսկ անհնար:

Անդրադառնանք պետական բյուջեի դեֆիցիտին և փորձենք հասկանալ, թե այն ինչպիսի խնդիրներ կարող է առաջացնել, և որոնք են դրանց լուծման ուղիները:

Բյուջեի դեֆիցիտը պետական բյուջեի կազմի երրորդ տարրն է: Ինչպես արդեն նշվել է, գործնականում գրեթե անհնար է ապահովել բյուջեի եկամուտների և ծախսերի հաշվեկշռվածություն, քանի որ բյուջետային ծրագրերի պլանավորումը իրականացվում է ենթադրությունների և կանխատեսումների հիման վրա, և, պարզ է, որ իրականում կլինեն որոշակի

շեղումներ, որոնք կհանգեցնեն հավելուրդային կամ պակասուրդային բյուջեի: Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, 2019 թ. առաջին 7 ամիսներին ունեցել ենք պետական բյուջեի հավելուրդ 107 միլիարդի չափով, իսկ 2020 թ. դիտարկվող ժամանակաշրջանում արդեն ունեցել ենք պետական բյուջեի դեֆիցիտ 104 միլիարդի չափով, այսինքն՝ 2020թ. նույն ժամանակահատվածում ծախսերը 104 միլիարդով գերազանցել են եկամուտները, որը ակնառու է նաև աղյուսակ 3-ում, որտեղ 2020 թ.-ին նախորդ տարվա համեմատ ծախսերը զգալի աճ են գրանցել: Ամբողջ աշխարհում ընդունված է այն մոտեցումը, որ եթե պետական բյուջեի դեֆիցիտը տատանվում է 3 %-ի շրջակայքում, ապա դա ընդունելի է: ՀՀ-ում 2020 թ. հունվար-հուլիս ամիսների պետական բյուջեի դեֆիցիտը կազմել է ՀՆԱ-ի մոտ 4.1 %-ը, որից կարելի է եզրակացնել, որ պետական բյուջեի դեֆիցիտը նորմայի սահմաններում է:

Ընդհանուր առմամբ, տարբերում ենք դեֆիցիտային բյուջեի ֆինանսավորման 2 աղբյուր՝ արտաքին և ներքին: Ըստ աղյուսակ 1-ի տվյալների՝ 2020 թ. դիտարկվող ժամանակահատվածում պետական բյուջեի դեֆիցիտի մեծ մասը (գրեթե 57 %) ֆինանսավորվել է ներքին աղբյուրների հաշվին, որը վկայում է դեֆիցիտի ֆինանսավորման համար ներքին փոխառու միջոցների առավել մեծ չափով ներգրավման մասին, որը նվազեցնում է փոխարժեքի տատանումներից առաջացող ռիսկերը, ինչպես նաև նվազեցնում անվճարունակության հավանականությունը: Նույնը չենք կարող ասել նախորդ տարիների մասին, երբ պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը տեղի էր ունենում հիմնականում արտաքին աղբյուրների հաշվին, որը վկայում է արտաքին աշխարհից կախվածության մասին, որտեղ մեծ են փոխարժեքի տատանումներից առաջացող ռիսկերը: Հետևաբար, ներքին աղբյուրներից պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը առավել նպատակահարմար է ռիսկերից խուսափելու և այդ տեսանկյունից առավել լավ դիրք գրավելու համար: Տնտեսագետների մեծ մասը նշում է, որ բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման կառուցվածքում առավել մեծ կարևորություն պետք է տրվի ներքին աղբյուրներին, քանի որ պետությունը միշտ հնարավորություն ունի ֆինանսավորել բյուջեն՝ օգտագործելով հարկադրույքների բարձրացման, ազգային արժույթի թողարկման կամ էլ վերաֆինանսավորման գործիքները:

Ամփոփելով կարելի է նշել, որ հատկապես ներկա սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամերի պարագայում ավելի է ընդգծվում պետական բյուջեի դերը՝ որպես պետության ֆինանսական համակարգի կորիզ: Քանի որ

այսօր ՀՀ-ը թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական առումով գտնվում է ճգնաժամային փուլում, որը կհանգեցնի պետական բյուջեի ծախսերի զգալի ավելացմանը և, որպես դրան հետևանք, մեծ վտանգ է պարունակում բյուջեի դեֆիցիտի աճի տեսանկյունից: Ստեղծված իրավիճակում պետական մարմինները ավելի մեծ պատասխանատվությամբ պետք է մոտենան բյուջետային ծրագրերին, դրանցից բխող հետևանքներին, և քանի որ պետական բյուջեն այսպիսի պայմաններում և ընդհանրապես հանդիսանում է պետության գոյության հիմքը, պետք է վերանայել բոլոր գործընթացները, ծախսային բոլոր ուղղությունները, առավել մեծ վերահսկողություն սահմանել պետական բյուջեի եկամուտի աղբյուր հանդիսացող սուբյեկտների գործունեության վրա՝ ստիպելով նրանց լինել անաչառ՝ կատարելով իրենց պարտավորությունները պետության և դրան հետևանք նաև հենց իրենց առջև: Կարճաժամկետ հատվածում խնդրին առավել օպտիմալ լուծում է ծախսային հատվածի կրճատումը, այսինքն՝ ծախսերի կառուցվածքում այն ծախսերի չափաբաժնի նվազեցումը, որոնք այս պարագայում համարվում են երկրորդական:

Անպայմանորեն քայլեր պետք է ձեռնարկվեն նաև երկարաժամկետում՝ այդպիսով նվազեցնելով պետական բյուջեի դեֆիցիտի կրճատման ռիսկը: Այդպիսի միջոցառումներից են.

1. Արտահանել պատրաստի արտադրանք հումքի փոխարեն
2. Խիստ վերահսկողություն իրականացնել ծախսային ուղղությունների վրա՝ փորձելով կրճատել ոչ արդյունավետ ծախսերը
3. Նպաստել երկրում ներդրումային միջավայրի կայունացմանը՝ փորձելով ավելացնել օտարերկրյա ներդրումները
4. Կառուցել ավելի արդյունավետ հարկային համակարգ, իրականացնել հարկ վճարող

սուբյեկտների գործունեության խիստ վերահսկողություն:

Վերոնշյալ քայլերի իրականացումը հնարավորություն կտա որոշակիորեն մեղմել ռիսկը և երկարաժամկետում ունենալ կայուն ֆինանսական համակարգ, որը ազգային տնտեսության զարգացման և մարդկանց բարեկեցության հիմքն է: Վերջապես, ազգային տնտեսության կայուն զարգացումը և բնակչության բարեկեցության ապահովումը համարվում են քաղաքակիրթ պետության գլխավոր նպատակները:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Գրիգորյան, Գ. Գրիգորյան, Ս.** «Իրավագիտություն»
2. **Մեհրաբյան, Լ. Ն. Սուրիապյան, Գ. Ա.** «Իրավագիտություն»
3. **Полякова Е. В.**, «Финансы и кредит»
4. **Алехин, Э. В.** «Государственные и муниципальные финансы»
5. <https://efinancemanagement.com/financial-management/public-finance>
6. <http://www.minfin.am/hy/page/araqelutyun/>
7. ՀՀ Սահմանադրություն, հոդված 110
8. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենք
9. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենք
10. https://www.armstat.am/file/article/sv_07_19a_211.pdf
11. Public Finance and Public Policy, Arye L. Hillman

Տճանաչվել է՝ 02.11.2020

Рецензирована/Գրախոսվել է՝ 15.11.2020

Принята/Ընդունվել է՝ 09.12.2020